ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Սույն թվականի սեպտեմբերի 12-20-ը Շվեյցարիայի Ժնև քաղաքում, ԵՀԽ-ի կենտրոնում, տեղի ունեցավ Կենտրոնական Կոմիտեի տարեկան հերթական՝ 47-րդ նստաշրջանը:

Նստաշրջանին մասնակցում էին Կենտրոնական կոմիտեի 156 պատգամավորներ, դիտորդներ, խորհրդականներ, հյուրեր և երիտասարդության ներկայացուցիչներ՝ վերահսկելու համար Խորհրդի և պաշտոնեության աշխատանքները մեկ համագումարից մինչև հաջորդ համագումարը ընկած շրջանում:

Նստաշրջանում լսվեց ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար Դր. Կոնրադ Ռայզերի և Կենտրոնական Կոմիտեի Ատենապետ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի հաշվետու զեկուցումները՝ նախորդ ժողովից մինչև ներկա նստաշրջան ընկած ժամանակամիջոցում ԵՀԽ-ի և նրա առանձին բաժանմունքների գործունեության, ինչպես նաև 8-րդ Համագումարի՝ Հարարե, Զիմբաբվեում տեղի ունենալիք 1998 թվականին, ծրագրերի մանրամասների մասին:

ԵՀԽ-ի ապագա գործունեության վերաբերվող 16 էջերից բաղկացած մի նախապատրաստված գրություն՝ *«Հասարակաց ըմբռնում և տեսիլք»* վերնագրով, քննության առարկա դարձավ կոմիտեի: Կոմիտեն երեք անգամ 90 րոպեանոց ամբողջական նիստեր գումարեց իր ապագա աշխատանքները ծրագրավորելու համար:

Կենտրոնական Կոմիտեի նստաշրջանում գլխավոր քարտուղար Դր. Կոնրադ Ռայզերը վերընտրվեց՝ շարունակելու ևս մի հինգ տարվա շրջան, որպես գլխավոր քարտուղարը ԵՀԽ-ի: Պատգամավորներին նստաշրջանի ընթացքում ներկայացվեց հատուկ մի ծրագիր՝ *«Եկեղեցաբանությունը և էթիկան»* թեմայով, որը վերաբերվում էր աշխարհին պատուհաս դարձած ԷՁԴՋ կամ ՍՊԻԴ հիվանդությանը:

Երրորդ հազարամյակի նախօրյակին ԵՀԽ-ի տնտեսական ծանր ու մտահոգիչ վիճակը դարձավ ժողովի մասնակիցների մտահոգությունների առանցքը:

Նստաշրջանի մասնակիցները հետագա օրերին բաժանվելով հինգ խմբերի, քննարկեցին իրենց բաժանմունքներին վերաբերվող հարցեր, ինչպիսիք են՝ պատգամավորների Ս. Հաղորդության մասնակցությունը ապագա Համագումարի ընթացքում, եկեղեցական միության հասնելու նոր հեռանկարների ստեղծումը, աստվածաբանական կրթության կարևորումը, էկումենիկ ինստիտուտը, երիտասարդության դաստիարակությունը, *«առաքելության և ավետարանչության»* մոտակա համագումարի կազմակերպումը, հասարակության և արդարության հարցեր, ցեղային խտրականության և աշխարհի բնակչության առողջապահության հարցեր, տեղահանված ժողովուրդների հարցեր, ԵՀԽ-ի տնտեսական ծանր վիճակը, կանանց իրավունքների և բռնությունների դեմ պայքարի հարցեր:

Ընտաշրջանի օրերին տեղի ունեցան հատուկ հանդիպումներ Կենտրոնական Կոմիտեի անդամ Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչների միջև, որոնց ընթացքում շեշտվեց Ուղղափառների ԵՀԽ-ի կյանքում գործուն մասնակցության անհրաժեշտությունը, ինչպես նաև Ուղղափառ Եկեղեցիների միջև սերտ կապի ստեղծման անհրաժեշտությունը: Հանդիպումներ ունեցան նաև Եվրոպայի և այլ ցամաքամասերի Եկեղեցիների ներկայացուցիչները, որոնք իրենց երկրների կրոնական, քաղաքական, տնտեսական, ընկերային կյանքի վիճակի մասին տեղեկություններ հաղորդեցին:

Սեպտեմբերի 20-ին, ուրբաթ օրը, երեկոյան, ընտաշրջանի ավարտին, ԵՀԽ-ի կենտրոնում գտնվող մատրան մեջ տեղի ունեցավ ընտաշրջանի փակման արարողությունը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից սույն ժողովի ընտաշրջաններին մասնակցում էին երկու պատգամավորներ՝ Տ. Ներսես Արքեպիսկոպոսը և Օրդ. Սիլվա Ղազելյանը:

Կենտրոնական Կոմիտեի սույն ընտաշրջանում ԵՀԽ-ի իբրև նոր անդամներ ընդունվեցին երկու Եկեղեցիներ ևս՝ այսպիսով անդամ Եկեղեցիների թիվը հասցնելով 332-ի: Նրանցից առաջինը Տոկիոյի Մեթոդիստ Եկեղեցին է, իսկ երկրորդը՝ Կինշասայի (Զաիր) Երիցական Եկեղեցին:

Ընտաշրջանի ավարտին Կենտրոնական Կոմիտեի անդամները որոշեցին, որ հաջորդ տարի ընտաշրջանը վերստին գումարվի Ժենևի կենտրոնատեղում, սեպտեմբերի 10-18-ը:

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱԼՅԱՆ
ԵՀԽ-ի Կենտրոնական Կոմիտեի անդամ